ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/56, 22.04.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Քլիներս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «AIA-MCT-09/20»

Գնման առարկան՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ համարելու «Քլիներս» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը.
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին պարզաբանում պահանջելու միջոցով հնարավորություն տալ «Քլիներս» ՍՊԸ-ին շտկելու հայտում առկա անճշտությունները.
3. Պարտավորեցնել Հանձնաժողովին նոր գնային առաջարկներ ստանալու նպատակով կազմակերպել բանակցություններ Հանձնաժողովի և «Քլիներս» ՍՊԸ-ի միջև:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «Քլիներս» ՍՊԸ
ՀՎՀՀ 00130286
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 34/3
ն/ք՝ 001878412, տրված 18.03.2014թ., 004-ի կողմից
հեռ՝ 091 25 55 51
էլ. փոստ՝ info@cleaners-service.am

Պատվիրատու՝ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ
հասցե՝ ՀՀ ք. Երևան 0042, Զվարթնոց միջազգային օդանավակայան

գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
AIA-MCT-09/20
«ԱՄՕ» ՓԲԸ-ի կարիքների համար «Զվարթնոց»
միջազգային օդանավակայանի շենքերի և
տարածքների մաքրման /այդ թվում սանիտարական/
աշխատանքների կազմակերպում և իրականացում

ԲՈՂՈՔ

1. *<u>Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>*

1.1. «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ «ԱՄՕ» ՓԲԸ/ 03.02.2020 թվականին հայտարարել է «AIA-MCT-09/20» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման /այդ թվում սանիտարական/ աշխատանքների կազմակերպման և իրականացման նպատակով:

1.2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից 17.03.2020 թվականին «Քլիներս» ՍՊԸ-ի info@cleaners-service.am էլեկտրոնային փոստին ներկայացված հաղորդագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել բոլոր մասնակիցների հայտերը՝ այդ թվում նաև «Քլիներս» ՍՊԸ-ի հայտը, բոլոր մասնակիցներին հայտարարել չորակավորված և կազմակերպել նոր մրցույթ:

1.3. «Քլիներս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ՝

ա/ մասնակցի ներկայացրած պայմանագրում նշված մաքրվող տարածքների մակերեսները չեն համապատասխանում մրցույթով սահմանված պարտադիր նվազագույն ծավալներին.

բ/ մասնակիցը չի ներկայացրել վերջին 5 տարվա ընթացքում կատարված աշխատանքներից առնվազն 3 պայմանագրի կատարումնընդունած կողմի գրավոր հավաստում՝ նշված մակերեսների ապահովմամբ

1.4. Հանձնաժողովը չիրականացնելով Ընթացակարգի հրավերով իրեն վերապահված ողջ լիազորությունները դրանով իսկ խախտել է հրավերով սահմանված պահանջները և մերժել «Քլիներս» ՍՊԸ-ի հայտը:

2. *<u>Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.</u>*

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընթացակարգի հրավերի «Բաժին 10.»-ի 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրավունք ունի մասնակցից պարզաբանում պահանջել ներկայացված հայտում առկա դրույթների անճշտությունների վերաբերյալ: Նշված դեպքում, եթե մասնակցի ներկայացրած բացատրությունը հնարավորություն է ընձեռում պարզաբանում մտցնել հայտում առկա դրույթի վերաբերյալ, ապա Հանձնաժողովը հիմք ընդունելով նշված պարզաբանումը մասնակցին համարում է որակավորված: Այնուհետև, նույն բաժնի 9-17րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը պետք է կազմակերպի բանակցություններ ոչ գնային չափանիշները բավարարած /որակավորված/ նիստին ներկա մասնակիցների միջև նրանցից նոր գնային առաջարկներ ստանալու և հաղթող մասնակցին որոշելու նպատակով:

3. Բողոքի պահանջը.

Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով.

Խնդրում եմ

1/ Պարտավորեցնել Հանձնաժողովին չեղյալ համարելու «Քլիներս» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը.

2/ Պարտավորեցնել Հանձնաժողովին պարզաբանում պահանջելու միջոցով հնարավորություն տալ «Քլիներս» ՍՊԸ-ին շտկելու հայտում առկա անճշտությունները.

3/ Պարտավորեցնել Հանձնաժողովին նոր գնային առաջարկներ ստանալու նպատակով կազմակերպել բանակցություններ Հանձնաժողովի և «Քլիներս» ՍՊԸ-ի միջև:

Կից ներկայացվում է՝

1. Հանձնաժողովի կողմից 25.03.2020 թվականին «Քլիներս» ՍՊԸ-ի info@cleaners-service.am էլեկտրոնային փոստին ներկայացված հաղորդագրությունը,
2. Նույնականացման քարտի պատճենը,
3. Բողոքարկման համար սահմանված վճարի անդորրագիրը:

22.04.2020թ.

Հարգանքով՝ *«Քլիներս» ՍՊԸ-ի տնօրեն Գարուշ Պապիկյան*